48. ԳՈՐՏ

Վախտին թագավոր մի կըլլի, իրեք տղա կունենա, ըս տղաքը կը խոշորնան. սուլթանը կըսե թագավորին. - Տղաքդ խոշորցան, կարգե:

Ես քյասիպ թագավոր իմ, իրեք տղա է, թագավորի հյարսնիքը խոլա՞ է, օ կարգիմ: Իրեք տղա ին, թող հավնին քաղքին մեջ, բերիմ, ուրուշ թագավորի աղջիկ չիմ կրնըր բերեր:

Սորվութին կար օ մեկու մի վե՛ր աղջկան սիրտ բըյնիր, էնոր դուռը խըշտ կը նետեին: Մենծ տղան նետեց. խըշտը գնըց ընկավ լալային դուռը. օրթանճան նետեց՝ վեզիրին դուռը:

Պզտիկը հեչ միտք չուներ, թավաքալլի նետեց, գնըց ընկավ տանծի ծառի քոք, գորտուն դպավ:

Թագավորը էրկու մենծ տղաքը կարգեց: Պզտիկը գնըց իրան նետած խշտին, հայավ օ զարկեր է գորտուն, գորտն էալ հոն չորցեր է:

Տղան ըսըց. «Իմ խսմեթը էաս է էղեր: Ես զաթի ի՞նչ էրեսով էրթըմ պապուս տունը, վրաս տի խնդան:

Էաղ ծառը ծերունի մարդու մի պաղչայի մեջ էր:

Տղան խըշտը առավ, գորտուն էալ առավ ծեառքը էկավ օ հալվոր մի նստեր է պատին տակ. էլավ կայնավ թագավորի տղի առաջ:

- Պապա՛, նստիր, մ'ելլըր:

Հալվորը չպողը հանեց, փչեց. ամըչնալուն թյություն չկրնըր ուզեր:

Թագավորի տղան նստավ, հալվորը քեսեն լեցոց, չպողնին փակոցին:

- Պապա՛, ի՞նչ ունիս, - հարցոց թագավորի տղան:

- Բան չունիմ, միևակ ըս տունն իմն է:

- Տունը քուկդ է, ինչո՞ւ դռվընին մեկը մեկ թարաֆ ես բացեր, մեկը՝ մեկ թարաֆ:

- Ըսի ամրան տեղ է, ամառը հոս կը պարկիմ, սերին է: Ձմեռն էալ հոս կը պարկիմ:

- Ձըլլիր, օ մեկ տանը բալլին տաս ինձի:

Մի տանը բալլին տվեց տղին, հարցոց. - Ի՞նչ տ'ինիս:

- Ըսդին քու տունդ մեշի մոտին է, ավը կէրթըմ կուգամ:

Տղան բալլին զարկեց գոտին, գնըց մեշեն ավը. իրեք հատ կաքավ զարկեց. էկավ իրիկվան տունը. մեկ հատը տվեց հալվորին, էրկուքը թողեց իրան: Կրակը վառեց. մեկը քեպապ ըրըց կերավ:

«Ըս մեկն էալ թող մնը, - ըսըց, - օ առավոտը ուտիմ, էրթըմ»:

Տղան ավին վրա տաքցավ, մնըց հոտ. իրան փեշեկնը ըդի էր, օրը իրեք հատ ավ կը բերեր, էան լման մեկը հալվորին կուտար, էրկուքը իրան կը պեյեր:

Մեկը իրկունը կերավ, մեկն էալ թողեց առավոտնը ուտե, հայավ օ չկա, ըսըց. «Ձհա փսիկն է տարեր»:

Էլավ գնըց ավը:

Ավլա էան լմանը բերըց, ավլա առավոտնը էլավ հայավ, օ մեկը չկա: Տասն օր էատանկ կէլլըր օ չկա, ըսըց. - Ըս փսիկը տի պեյիմ, զինիմ ես:

Առավոտը էլավ օ ավլա չկա. տումաննը էջեր՝ արզևը կուգա:

- Էաս արզևին չիմ կրնըր էրթըր ավը, թող արզևը կըյրի, էրթըմ վլացվիմ, իգամ, կրակնը ինիմ, տաքնամ:

Դուռը կղպեց, դռան ծկուն հայավ. «Տեսնըմ, փսի՞կ կուգա կուտե», - ըսըց:

Հայավ օ մի աղջիկ փենճերեն էլավ, օ աշխըրքին էրեսը չգտնվիր. կաքավը առավ վեար, պաշլայեց փետիլը, շիշը զարկեց բերըց կրակին վրա:

Տղան ինքզինք ըսըց. «Լավ, էրթըմ վլացվիմ, իգամ»:

Դարձավ, դուռը բացեց, մտավ ներս օ աղջիկ չկա. հայավ օ կեսը կերեր, կեսը տղին է թողեր:

Տղան զարմանք մնըց: Արզևը կըյրվավ, գնըց ավը, զարկեց ճեյրան մի, նետեց փեճը, ընկավ ճանփա, էկավ տունը, բերըց կինե իրեքին խսմեթը, քերթեց, մեկ պուտը տվեց հալվորին, մեկ պուտն էալ ինք քեպապ ըրըց, մեկալն էալ առիքն ի վեար կախեց կաքվուն տեղը:

Էլավ առավոտուն օ կախ է տահա, ըսըց. «Էրթըմ վլացվիմ, իգամ»:

Հազկոր գնոց էկավ, դուռը բացած ժամանակը աղջիկն էալ չկրցավ ժմնցըներ, ուտեր, ղայպ էղավ:

Տղան նստավ, գլոխը կերավ, զարմանք է մնացեր. ըսըց. «Ես տի պեյիմ»:

Ապան քաշեց գլոխը, պարկավ օճախ դուռը, ըսըց ինք իր մտոքը. «Էսօր վախտ չունիմ էրթալու, ավը շատ է, կեսը պապային, կեսը ինձի հերիք է»:

Պարկավ, սուտ քուն էղավ, տեսավ օ փենճերին էջավ մի աղջիկ, մազերը գետինը կը քսվի. քեպապը առավ, էլավ փենճերին նստավ:

Տղան շատ վախեցավ, ըսըց. «Էս դիվանքուց տեղ է»:

Էլավ դուռը բացեց, գնոց ավը:

Իրիկուն էկավ պապային քով: - Բարև, պապա՛, - ըսըց:

- Աստուծո բարին, որդի՛:

- Պապա՛, ըս դիվանքուց տունը ինձի՞ տի տայիր:

- Հարիր եոթ տարվա մարդ իմ ես, չիմ տեսեր տահա էատանկ բան. վախեցեր ես, որդի՛, աչքիդ էանանկ կէրևա:

Տղան գնոց ավը, զարկեց կեյիկ մի, շալկեց էկավ, քերթեց, պուտը տվեց պապային, մեկալը մայրեց, ըսըց. «Խավուրմա ինիմ, օրը մի քիչ ուտիմ, էրթըմ ավը»:

Տղին քունը տարավ, կեյիկը մենծ էր, խոնջըցեր էր, չարոխները չէր թրջեր էր*. չպողը խմեց, քունը տարավ:

Աղջիկը էջավ վեար, լցեց պղնձին մեջ, դրեց օճխին վրա: Կրակը վառեց. տղին չարոխնին քակեց, չորապները հանեց, չարոխնին վլաց, չորապնին չորցոց. թեմիզ ընկողին մի ցգեց, եորղան մի ցգեց վրան:

Տղան մի ամիս էր՝ չոր գետինը կը պարկեր, ազնիվականի տղա էր, շատ խորուն քունը տալմիշ էղավ, մի ամառվա հայիֆը հանեց: Մինչև ճաշ քնացած մնըց:

Աղջիկը բերեց խավուրման էփեց, բերեց ֆառֆըռի չինիեն պղողը լեցոց:

Տղան արթըցավ, էլավ նստավ՝ ըսըց. «Քնուկ իմ մնացեր, օ խավուրման էփեի:

Տեսավ օ ղութնի ընկողին մի կա վրան, շատ թեմիզ: «Զահար դրացնին հարսն է էկեր, ցգեր վրաս, գինան օ թագավորի տղա իմ»:

---

* Հավանաբար բանասացը շփոթել է: Ըստ հեքիաթի տրամաբանության պետք է լինի՝ թրջեր էր (ծ.կ.):

Առավոտը փորը կշտացոց, գնոց ավը, էկավ մթան տունը: Դուռը բացեց՝ օ կրակը վառմուն, ղուշ-թիվեն յաթաղը ցգմուն, օսկի թելով բարձերը յաները դրմուն, խավուրմով փիլավը էփմուն, օսկի դգալը վրան զարկմուն:

Տղան օ տեսավ, կայնուկ մնոց. «Ի՞նչ բան է, իմ դուռը կղպըմուն է»:

Խելքը գլոխը էկավ, ըսոց. - Դրացնին հարսն է գահար:

Նստավ փիլավին գլոխը, օսկի գդալը առավ ձեառքը, յանաշմիշ էղավ փիլավին, կերավ էլավ: Ըսոց. «էրթըմ աղբիրը, վլացվիմ»:

Տեսավ օ իպրիխ-լեկենը հազիր, սապոնը վրան դրմուն: Վլացվավ, գնոց ավը, քյոնն ու արզևը առավ, թրջվան, թել ու դերձան չմընոց, չամըրները պլվան, ջուրը վրուն կը վազե:

Ետ դարձավ, էկավ բացեց դուռը, տեսավ մի խալի է շիտկած, օ աշխրքին էրեսը չգտնվիր: Տղին օտքը չամուր էր, խալիին կեսը թոփեց, նստավ գետինը: Կերակուրը հազիր էր, փորը կշտացոց, չպողը լեցոց, քաշած ժամանակը թմպրվավ, քունը տարավ, տղան չոր գետինը քնացավ:

Կեոզինե տեռնտյուկյում սիրուն աղջիկ, փենճերեն էջավ, ըղընգվընին օսկի, արղընին մարգրիտ, էկավ ըս տղին չարոխնին քակեց, չորապը հանեց. մի չորապը չիր կրնը հաներ, շատ դժար կելլը:

Տղան արթընցավ, տեսավ օ մի աղջիկ կը հանե, եորղնին տկուն ձեառքը էրկնցոց, աղջկան թևեն բռնեց:

Տղան շատ վախեցավ, էրեսին պենկզը գնոց:

Աղջիկը ըսոց. - Թագավորի՛ տղա, մի՛ վախենար, ես էալ իսանի մինե իմ, քու խսմեթդ իմ:

Տղին սիրտը դադարավ, խնդալը վրան էկավ:

Աղջիկը ըսոց. - Խընշտով օ տանձին տակ զարկիր, քու խսմեթդ իմ, ես էալ թագավորի աղջիկ իմ:

- Հապա ինչո՞ւ, իրեք ամիս է էաս ղտի ինձիս կը չարչըրես:

- Ես եոթը տարի է քեն իմ էրեր պապուս մինե, մորս մինե. գորտուն շապիկը կը հագնեի, կըլլեի գորտ, նետեցիր, խշտով զարկիր, շապիկս ճղեցիր, տլըսումս ավրավ, ես քունն իմ, դուն իմն իս: Տերը էատանկ գրեր էր:

Էլավ աղջիկը յաթաղը ցգեց, մեկտեղ պարկան, աղջիկը թուր մի ուներ, մերմեր քարին կը զիներ՝ ձմերկա պես էրկու կտոր կիներ, կեծակի կտոր էր, իրեք թիզ էրկան էր, էվել-պակաս չկար:

Տղան ըսոց. - Մեք օ մեկտեղ պարկանք, դու կըսես՝ իմ նշանածն իս, հպա ըս թուրը ինչո՞ւ դրիր արանիս:

- Մի՛ մոտենար ինձի, թուրը կը կըլրե քիզի, ժամանակ շատ կա, ես գինամ:

- Ինչո՞ւ ժամանակ շատ կա, օ իմ նշանածս իս, ե՞րբ պտի միասիք, երբ պտի պսակվիք:

- Քու պապդ՝ իրեք ամիս է դուն էլեր ես - ղայպ էդեր ես, դելալ ցգեր է քաղքին մեջ, դելալը կը կանչե. «Հեր վեվ օ իմ տղան գընանա, էրկրներ կուտամ, թող էրթա, նստի ուտե»: Էսօր խապար կուտան թագավորին, տեղդ իմաց էղան:

Խապար առավ սուլթանը, օ իրան տղան պապային տունը կարգված է:

Տղան ըսըց. - Ի՞նչ գիտեն, թե ես վեր մի մայլեն իմ:

Խապար տված ին թե՝ Ապտեհեր մայլասին, հալվորին տունը, կաթնաղբրա քովը:

Տղան դուրս էլավ օ ավը էրթա, մորը պաշ-խալայեղը դեմը դպավ, կճկվավ թագավորի տղին օտքը պագեց, ըսըց. - Մեարդ քիզի բարև ըրըց:

- Աստուծո բարին, - ըսըց:

- Թող տեղ չէրթա, - ըսըց, - տի գամ տեսուքան:

- Ես ժամանակ չունիմ, ավը կերթըմ, ինձիս ի՞նչ տի տեսնա, ես քեասիպ մարդ մ'իմ, օ ժամանակը գա, խապար կուտամ:

Խալայեղը ետ օլրվավ, աղջիկը էլավ դուրս, տղին ըսըց. - Էսօր ավը չպիտի էրթըս, կանչե խալայեղին ըսա՝ ճաշվա մեարս թող գա:

Աղջիկը մտավ ներս, տղան կանչեց խալայեղին: - Մորս բարև կինիս, ճաշվա թող գա. - ըսըց:

Դարձավ մտավ տուն ըսըց. - Թագավորի՛ աղջիկ, մեք բան չունինք, ինչո՞ւ դու էաս բանը բռնեցիր:

- Հիմա ես պատրաստ կը տեսնըմ, թալաշ մ'իներ: Չպողդ կը քաշես, կերթըս՝ ինձի օ խշտով զարկիր, էան տանձին քոքին քովը կայնիս, կը կանչես. «Քենի, քենի, պզտիկ քորդ բարև ըրըց. պզտիկ խալին թող տա»: Կուտա, առ էկո:

Տղան գնըց տանձի քոքը, իրեք հեղ «քենի, քենի, քենի» կանչեց:

Ըսըց. - Համմե:

- Պզտիկ քորդ բարև ըրըց, պզտիկ խալին կուզե:

Առավ խալին, բերըց տունը: Շտկեց աղջիկը տանը մեջ օ աշխրքի էրեսը հեչ չէ դպեր, նե ձեառք է դպեր, նե մարդ է տեսեր:

Աղջիկը ըսըց. - Գնա բեր էաս քիլիմի պզտի բարձը:

Տղան էան լմանը գնըց. առավ էկավ, շարեց քիլիմի բոլորը:

- Գնա սանճաղը բեր:

Բերեց շարեց:

- Գնա՛, պզտիկ սուրֆան առ, էկո:

էան լման բերեց:

Աղջիյն ամեն բան հազիր ըրըց. ըսըց. - Թագավորի՛ տղա, մեարդ ճանփան է, քառսուն խալայեղ հետը կուգան:

էկավ մեարը, տղան մորը ձեառքը պագեց, մեարը տղին էրեսը պագեց, հարսն էալ պեյվեր է, մտան ներս:

Տեսան օ աշխարքի էրեսը էասանկ զարդարմուն նե էկեր է, նե կուգա:

Մեարնը ըսըց. - Որդի՛, գետինը անգին քար ես շարեր, պատը ըռանց շեղախ է, առիքը սև է, ո՞ւր է հարսը, - կը հարցնե խալայեղին:

Աղջիկը ինքիզինք պա տվեց. խալայեղ բռնեց սուլթանին ձեառք, վերոց փերտին ճոթը, մտավ ներս, հանեց դուրս:

Սուլթան տեսավ, խելքը ընցավ. ջուր թափեցին սրտին վրա:

Հարսը ղայվե էփեց, օսկի ֆինճանով տվեց: Սուրֆան շտկեց, տեսան օ աշխարքը ինչ ղտի կերակուր ըսես, պատրաստ է: Մեջը պուղը կէլլա: Ամեն եմեկե մի լոխմա առավ, հեչ մորը մինե էղեր, էատանկ կերակուր չէ կերեր:

Սուլթանը էլավ, բարև-մնա էրավ, ընկավ ճանփա, որին օսկի թաս, որին թանկագին բան տվին:

էրթալու քիմին՝ սուլթանը թագավորին խապար ճանփեց. «Թող գա ինձիս տեսնա»:

Թագավորը էկավ սուլթանին քով, սուլթանը չպողը վառեց, աթոռը քշեց տակը, նստան, պաշլայեց չպողը քաշիլը:

- Ի՞նչ խապար, սուլթա՛ն, ի՞նչ տեսար:

Սուլթանը հանեց պարգևնին դրըց թագավորի առաջը: Թագավորը զարմացավ, խապար ճանփեց: Վեզիրը գնըց Ապտեհեր մա յլեն՝ կաթնաղբրա քով, մտավ ներս: Թագավորի տղան կայնավ:

- Մ'ելլը՛ր, թագավորի՛ տղա:

- Ծառայութինը Աստուծո համար է:

Տեսավ օ սուլթանը ինչ չեշիտ նախլ ըրըց, էան լմանը տեսավ:

Թագավորին ինչ օ ագպա կար, առավ էկավ տեսութան: Վեզիր, նազիր, լալան ներսը նստան:

Կաթանղբրա առաջ չայիր էր, ջուրը չորս լյուլե կը վազեր, չորս բոլորը ուռի ծառ էր:

- Թագավորի՛ տղա, հասիր տանձին քով, - ըսըց աղջիկը, - քրոջս մինե պզտի խալին առ, էկո. քառսուն մարդ էալ հետդ տար:

Առին էկան, շտկեցին: Անքան մարդ վրան նստան, մեկ դին էալ պոշ է մնացել: Կերան-խմեցին, հերքեշ իրան առջևու բանը՝ պարգևը տարավ:

Գցին սարայը: Սուլթան խապար ճանփեց տղին. - Հարսս տուր, գնա՛:

Սարդ ճանփեց, առավ տ'էրթա:

Աղջիյնը ըսըց. - Ես իրեք օր կը մնըմ հոն, ըս բաները կը տանես քրոջս, դուռը կղպես, կը նստիս փենճերին թարաֆնը՝ հազկոր ես իգամ. էադ շապկիս մուխաթ կըլլիս, անգին քար է:

Տղան նստավ հոնի, հայավ հոտ մի կուգա:

Գաք աղջկան:

Սուլթանը առավ, տարավ համամը, պզտի հարսը էրկու մենծ հարսը լոքցոց առաջ:

Սուլթանին գոտին քակեց, լաթերը հանեց, լոքցոց. հագոց, գոտին կապեց նստավ:

Սուլթանը ըսըց հարսին. - Ձեռոքս տի լոքցընեմ քիզի, գոտիդ քակե, լաթերդ հանե:

Սկկյուլլիվ պզտի հարսը նստավ: Սուլթանը թաս մի բերըց:

- Իմ թասս հազիր է, - ըսըց հարսը, - իմ թասով լոքցուր ինձիս:

Չորս թաս ուներ հարսը, չորսն էալ չորս մեարիֆեթ ուներ: Օսկի թասով լցեց ջուրը վրան, ջուրը օսկի կըյրվավ, թափեցավ առաջը: Արզըթի թասով լցեց՝ արզաթ կըյրվավ: Ալմաստ թասով լցեց՝ ալմաստ կըյրվավ: Անգին քարե թասով լցեց՝ անգին քար կըյրվավ: Մեկ դուն խալայեղնին կը թուփեն:

Գաք տղին:

Գորտի շապիկի հոտը առավ. «էաս ինչ տիը ըլլի, - ըսըց, - բերըց նետեց կրակը, վառվավ»:

Աղջիկը մարգրտե թասեր շատ ուներ, տվեր էր ծեառքը օ ջուր լեցընե, գորտի շապիկի հոտը քինթը առավ. - Կեցի՛ր, էալ մի՛ լեցներ, տղադ իմ տունը ավրեց, - ըսըց աղջիկը ու թասը առավ, լաթերը հագավ, գոտին կապեց, մուճան էալ չհագավ, բոբիկ պաշլայեց լացը-աղաղակը:

Հե մ'էլ «Տղադ տունս վառեց» ըսըց, էղավ մի աղվնիկ, համամի միջուն թռավ փենճերեն դուրս, էջավ տղուն էան փենճերեն:

Տղան տեսավ օ աղվնի մի էջեր է, ըսըց. - Իրեք օր է ավը չիմ էրթըր, ավս-խսմեթս էկավ, էջավ փենճերեն:

Աղվնին ըսըց. - Թագավորի՛ տղա, դու ավդ չկրցար ուտեիր, ես քիզի թենպեհ էրեցի, իմ շապիկը ինչո՞ւ վառեցիր. թագավորի՛ տղա, իմ տեղը եոթ տարվա ճանփա է, էնքան հեռուն է օր, հինգ տարին լոս աշխրքեն տ'էրթըս. մի տարի մութ աշխրքեն, մութ աշխարքը օ խալըսի՝ մի տարի էալ լոս աշխրքեն: Եոթը էրկթե չարոխ կարել կուտաս, եոթն էալ օ ծական՝ իմ էրկիրը անճախ կը հասնիս, կը շինես էրկթե տեյնեկ մի, կառնես ձեառքդ, էանքան կէրթըս օ կը մաշի, ճոթը ասեղի պար կըլլի, անճախ ոտքդ կը մննա իմ սայմանը: Կերթըս Նարվելու քաղաքը, հոն մի քյուրեճի կա, էան կը շինե էրկթե չարոխ, տեյնեկ: Դու ինձիս հավընցուցիր, էկը ես էալ քիզի հավնցուցի նե՝ հա, հավընցուցի, չհավընցուցի նե՝ Աստուծա բանն է:

Աղջիկը «Մնըս բարի» ըսըց. փռլանմիշ էղավ փեննճերեեն, հայտե, գնըց:

Իրեք օր հոնի մնըց տղան, նե խելք, նե խապար: Խելքը գլոխը էկավ, դուռը կղպեց, բալանիքը տվեց հալվորին, գնըց տանձին քոքը, կանչեց. մի սահաթ նե՛ ձեան, նե՛ խապար:

Պաշլայեց ձեռոքը ծնկվընին զինիլը, անդտի օ ծնկվընին թմպրվավ, թևերը թուլցան, հոգին ծայրըցավ:

Էլավ ընկավ ճանփա, գնըց Նարվելու քաղաքը. ամիս մի օլրտավ քաղքին քեոշե-պուճախը, ուլու-մենծ քաղաք էր. անճախ գտավ քյուրեճին, օ աղջկան պապուն քյուրեճին էր. քեն էրեր, էկեր էր էաղ քաղաքը. աղջիկը թենպեհ էրեր էր օ տղան գա նե՝ էրկթե չարոխ, տեյնեկ շինե:

Տղան գտավ, ըսըց. - Բարև, վարպե՛տ:

- Աստուծո բարին:

- Ինձի եոթը էրկթե չարոխ կը կարես*, մի տեյնեկ կը շինես:

Եոթը էրկթե չարոխ, մի տեյնեկ շինեց: Չարոխը հագավ, տեյնեկը առավ ձեառքը, ընկավ ճանփա. գիշեր-ցորեկ կէրթա ու կէրթա: Շատ գնըց, քիչ գնըց, կինե գնըց մտավ մութ աշխարքը, մնըց մեկ էրկթե չարոխը: Վեց ամիս պիր տյուզիյե գիշեր է, վեց ամիս պիր տյուզիյե ցորեկ: Գնըց քաղքի մի պենդ էղավ, քաղքին միջուն շատ-քիչ գնըց, չյունքի գիշեր էր. - հա՛ սը խանը կինամ, հա՛ նը խանը կինամ, ախըլանմիշ էղավ օ քաղաքը անտեր է: Քունը էկավ, գնըց մենծ չինարի մի ծառի տակ պարկավ, մտքով անցոց. «Թող լուսանա, կէլլըմ կէրթըմ»:

Քնացավ-արթըցավ, չլուսանար, տղան տիշլըխսըզ էղավ. - էաս գիշեր ի՞նչ շատ էրկեան էղավ», կըսեր, չէր գիտեր օ վեց ամիս գիշեր է: Ավլա

---

* Վարպետը իմացավ էան տղան է (ծ.ա):

պարկավ ծառին տակ, տեսավ օ Զմրութ ղուշուն ծագերը շատ սզլանմիշ կըլլեն ծառին վրա, գլոխը վերոց տեսավ, մեկ աժդահար մի ծառն ի վեր կէլլըր՝ ծագտիքը ուտե. թուրը քաշեց, մի հատ զարկեց, ծառը հետը կեսը կըյրեց:

Չպողը լեցոց, պաշլայեց քաշիլը, ավլա չլուսանար:

Անքան տեսավ օ վերեն-էրկնուց մի կուժուրտուկ կէջնա, էրկինք, գետին դող կէլլա: Զմրութ-ղուշին զարպով էջավ տղին վրա, օ զինե:

- Մեարի՛կ, մեարի՛կ, չըլլի զինիս, - ծեան տվին ծագտիքը, - գետինը հայիր, էադ է մեզ փրցնողը:

Զմրութ-ղուշին տեսավ օ ղոճա աժդահար գետինը ընկեր է. տղին թուրը էարնոտ է տահա, տեղը չէ զարկեր, տարավ վլաց. զարկեց պատինքին մեջ:

- Մնըս բարով, Զմրութ-ղուշի, - ըսըց տղան:

- Նստիր, տղա՛, հարցունք ունիմ քիզի, տի ըսիմ:

Տղան նստավ, չպողը լեցոց: Զմրութ-ղուշին չախմախը զարկեց. ըսըց. - Քառսուն տարի է ես էաս չինարի ծառի վրան իմ, տարին չուք մի ծագ կը հանիմ, աժդահարը կուգա, կուտե իմ ծագտիքս, տե հիմա ինձի ծագ չէ թողեր, դու ազատեցիր, մուրազդ ուզե, օ տամ:

- Թագավո՛ր ապրած, մուրազս քու սաղութինդ է:

- Իմ սաղութինս քիզի օգուտ շիներ, ուսկա կուգաս, ո՞ւր կէրթըս:

- Ես էալ չիմ գիտեր, ուր կէրթըմ, թագավոր ապրած, տերտերս մի՛ քակեր:

Զմրութ-ղուշին հասկցավ տղին բնաբանը, առավ տղան երկու թևին օրթըլախը, թռավ, պտըտեց, պտըտեց-պտըտեց, էլավ էրկնուց դաթը, հանեց լոս աշխարքը, արևին տեղը էջոց, ըսըց. - Օ՜ֆ, շատ խոնջցա, ծերութանս ըռաստ էկար:

Զմրութ-ղուշին հանգչավ, առավ տղան, կինե էլավ էջոց էան թագավորին սայմանին ջրին քնարը, օր պզտի ծով մի կա, կեմի կը բանի, ըսըց. - Տե էաս ջրին քնարը իմ սայմանն է, ընդին՝ ըն թագավորին, հրաման չկա ընդին անցնիմ. քու աղեկութինդ շատ է աշխարքին էրեսը ինձի, չպողդ լեցոր, հազկոր չպողդ խմիս, ես կուգամ:

Զմրութ-ղուշին դայպ էդավ, տղան մտքով ընցոց. «Ինձիս խափեց, թողեց գնըց»:

Մտքեն անցոց չանցոց՝ Զմրութ-ղուշին էկավ, բերըց քոլոզ մի, դրեց իրան գլոխը, ծեան տվեց տղին. - Քիզի կէրևա՞մ:

- Չեանդ կուգա, դու չիս էրևար:

Տվեց տղին, զարկեց գլոխը, ըսըց. - Կեմին կուգա ըսդին՝ կը մննըս կեմին, ըն թագավորի կեմին է, քոլոզդ վեար չառնես վեար առնելուն քիմին գլոխդ կը կըյրին, կը նետին ջուրը, կեմին անցար, մի սահաթ կէրթըս՝ սարայը կուգա առջիդ, տակը մի աղբիր կա, չորս տեղե կը թռի, օրթըլըխինը օսկի կը վազե, մեկը արզաթ կը վազե, մի քնարին էալ ջուր կը վազե. թագավորական պեքճի կա հոնի, միշտ կը վազե խալիպ կըլլի, կառնին կէրթըն. մութը վրա կառնե, վրան կափանք ունի, կը գոցին պեքճիստանը, աղբիրը կը մնա թեյնա, գիշերը կը մնըս հոն, թագավորի պզտիկ աղջկան օդին փենճերին տակ է. առավոտուն թեզ թագավորին աղջիկը կուգա, կը վլացվի. էրկթե չարոխը, էրկթե տեյնեկը պինեք-տաշու վրան կը դնես. քոլոզդ վեար չիս առնիր, կը տեսնա չարոխն ու տեյնեկը՝ էան գինա օ դու էկեր իս, զարմարք կը մնա. «Ո՞ւր է էաս չարոխին տերը»: Աղջիկը մտոքը կանցնե՝ պեքճիստանը գլոխն է կըյրած: Աղջիկը ետ կը դառնա օ էրթա, դու՝ ահա, էրա քոլոզդ վեար առ. աղջիկը կօլրվի՝ քեզ կը տեսնա:

Տղան էլավ անցավ ծովը, Ջմրութ-ղուշուն ըսածին պես. տեսավ աղջիկը. մտոքը անցոց. ետ օլրվավ օ էրթայ պեքճիստաննուն գլխընին կըյրե:

Տղան քոլոզը վեր առավ հազաց՝ ահա: Աղջիկը օլրվավ ետ, տեսավ տղին էրեսը. կըսես զահար տասուերկու տարի է զընդանն է նետած, աչվին կը պսա:

- Թագավորի՛ տղա, հավնար ինձիս:

- Թագավորի՛ աղջիկ, խափվաք:

Տղին թևեն բռնեց, առավ գնըց, տարավ կոխեց իրան օդան, լաթերը փոխեց. զինք լոքցոց. մերդե շերպեթ էրին, խմեցին, եաթաղը ցգեցին, պարկան:

Աղջկան սարայը օսկի-արզաթե էր շինած:

Ժամանակ մի մնըց. աղջիկը թենպեյ ըրըց խալայեղին. օ մարդու չըսա՝ տղա կա հոս:

Առավոտնը էլան, դայվե, չպող քաշեցին. տեսան օ աղջկա օրթանճա քորը էկավ տուն. խալայեղը խապար տվեց աղջկան:

- Խալայե՛ղ, ո՞ւր է բալլիքը, տղան սնտուկը կոխիք:

Բալլիքը չգտածտան՝ տղան քոլոզը դրեց գլոխը, էնոց չիր էրեվար, թագավորին աղջիկը զարմանք մնըց թե՝ էաս տղան փախավ:

Քորը գնըց ինք իր տեղ: Տղան քոլոզը դրեր, չպողը կը քաղեր: Թագավորի աղջիկը ըսըց. - Ըս տղան ո՞ւր գնըց:

Աղջիկը օդին մեջ կը հայի, խալայեղը դուրսը կը հայի, չին կրնըր գննըր:

- Խալայե՛ղ, մութը վրա հասավ, ի՞նչդուր ինիք:

Աղջիկը թուրը կապեց, ճրագը փակոց. պապուն իրեք հատ հրեղեն ձին կար, իրան օդին տակ էր: Ըսըց խալայեղին. - Աղջի՛, քաշե խըռ ձինը:

Թագավորը ձիանը էրեր է օդան, մի ծակ է թողեր:

- Ուսկա անցնիմ ես, - ըսըց խալայեղը:

- էրկթե տեյնեկը առ, գնա փենճերեն քակե, ձինը հանե:

Տեյնեկը առավ, գնըց:

Տղան ըսըց. - Իմ էտևես տ'էրթա:

Տղան քոլոզը վեար առավ, հազաց՝ ահա:

Աղջիկն ըսաց՝ էկա:

- Դու ինդուր օ ինձիս չարչարեցիր, ես էալ տի չարչարեի, չի ղմըշա:

Աղջիկը մտքով անցոց. «էաս տղին քով մեծ մեարիֆեթ կա»:

Տղին քոլոզը վեար առավ. - Բեր, գլոխդ սայրիմ:

Տղան չթողեց. - Ես գիտեմ միտքդ ինչ է:

Իրան քոլոզը զարկեց աղջկան գլոխը: Աղջիկը կը զրուցեր, ձեանը կուգար, ինքը չիր էրևար: Տղան օ քոլոզը թերս կը դներ, մարդու չիր էրևար, կը չտկեր կը դներ՝ կէրևար:

Թագավորի աղջիկը դադարավ. մի տարի ժամանակ կերան խմեցին, մեկտեղ պարկան, մարդ չգիտցավ:

*

* *

Էաս թագավորը զոռ էր, սայմանը շատ էր: Էսոր բոլորը եոթ թագավոր կար, կռիվ էլան էսոր վրան. էսոր աղբիրը օսկի կը վազեր, էան մեկալ թագավորներ չէին կրնըր գլոխ էլլեր: Ժողվեցան իրուր քով՝ պաշ-լայեցին լախրտու էնիլը: Եոթն էալ՝ էնի ըսաց՝ իմ սայմանի կեսը առեր է, էնի ըսըց՝ կեսը առեր է: Եոթն էալ թուղթ գրեցին, ճանփեցին էաս թագավորին. «Մեր սայմանները էվելքու տեղը դիր, չե՛ս դնի, կռիվնիս կռիվ է»:

Թագավորը հերսոտավ ինքզինք փեկրտե. էվել որ մեկ թագավորի սայմանը շատ առեր էր, էան պատրաստ տեսավ, էլավ կռիվ: Էրկուքին սայմանին օրթալախը - խանլի ծորուն վրա, կռիվը բռնվավ: Ըն թագավորի մարդիկը յաղթվան:

Մի ամսվա ետքը մեկալ թագավորները էլան օտացը վրան, կռիվ էրին. ըսի յաղթվավ, մարդ չմնըց, ջարդվան, «մեր զմանուկ ուրացավ»: Ժողովուրդը մնըց, վարժըմուն ասկեր չկա, էկան էաս թագավորի կեսը զարկեցին, զաֆթեցին:

Թագավորը նեղ վիճակի մեջ է. ըսըց լալային. - Ի՞նչդուր տ'ինինք:

- Արզթե, օսկիե աղբիրը վազելուն սորա՝ տուր ժողովրդին, կը կայնին դեմը:

Հրամայեցին վեզիրն ու նազիրը, խազինին դուռը բացին. - Հեր վեվ օ կռիվը կէրթա, ճիվալը թող առնե իգա:

Իրեք օր, իրեք գիշեր օսկի, արզաթ տարտղնեցին ժողովրդին, առնողը կանցնի կռիվին դեմը, բռնվավ կռիվը, իրեք օր, իրեք գիշեր տիլ օլան չթնդաց, չփրթավ, ժողովուրդն էալ գնը, մնացած ժողովուրդը ճուապ ըրը թագավորին. - Մեք կռվի մարդ չիք, քոքումնիս է մնացած:

Թագավորը շատ տյուշյունմիշ կըլլի: Թագավորներ էկան, քաղքին չորս դին բռնեցին:

Աղջիկը տղին գլխուն վրա նստեր էր, կուլար:

Տղան արթըցավ. - Թագավորի աղջիկ, ինչո՞ւ կուլաս:

- Ես չլամ տե՝ վեվ տ'իլա. խապար չունիս, քաղքին չորս դին բռնած ին, մեզ եսիր տի տանին, բանլիստանը կուզին պապուս մինե:

- Գնա, պապուդ մընե թոփալ ձի մի առ էկո, մեք էալ էրթը կռիվ, թող ըսին՝ փեսան էալ գնը, զարկվավ:

Էլան աղջկան հետ ճրագը փակոցին, գըցին ձիաննուն տեղը, տեսան օ քիրեն խորոսանով պատած է, ինքեան չըլլիր քակելու: Տղան գլխու քոլոզը վեար առավ, օլրեց թերս թարաֆը, անցավ ծակեն ներսի թարաֆը, քաշեց կարմիր ձինը, քոլոզը զարկեց ձիան գլոխը, էուլարը տվեց աղջկան, քաշեց ձինը, օձու պես սյուզյուլմիշ էղավ, անցավ աղջիկը ձիուն գլխուն առավ քոլոզը, տվեց տղին, տղան էալ անցավ. ձինը քաշեցին, բերին իրանց օդին դուռը, տղան թաթառ-թիմարի մի տվեց ձիուն, այարը զարկեց, ղոլանը քաշեց, թուրը կապեց, ղալխանը անցոց շնլին, մզրախնը առավ ձեառքը, քաշեց պինեք-տաշուն տակ:

Աղջիկը ձիուն կեմն էր բռներ, տղան պաշլայեց ժրեցնիլը. մորը մինե էդեր, գլխուն մազերը չէր բանար. փուշի մի կապած էր, քոլոզը փուշին վրան կանցըներ:

Փուշին քակեց գլխուն, մազերը բացվավ, թափուավ փիճին վրա, մազերուն լավութան կը վառվըռեր գոնը, տղին էրեսը կը գիներ, տեսնողը կըսեր. «Էաս ինչ հիքմեթ բան է»: Տղան ծեռոք պաշլայեց սայրիլը. օ սայրեց՝ պաշլայեց շավլալանմիշ ըլլիլը. փուշին կապեց. քոլո զը դրեց. օտքը նետեց զենկուն, հեծավ ձին:

Թագավորն ու լալան տեսան, օ պզտի ազջկան դուռը մի ձին կա, մի տղա գլոխը կը սայրե, մի հոգի էալ կեմը բռնած է, տեսան զարմանք մնացին: Տղան ձինը հեծավ, ընկավ ճանփա դեպի կռիվը:

Թագավորը հրամայեց. - Գըցե՛ք դուռը բացեք:

Քառսուն ու եոթը դուռ ուներ, հազկոր գըցին, չգիտցան վեր մե դռան քովն է: Լալան ու թագավորը տեսան, օ ձիով մի պետեննուն վրան աշմիշ էղավ:

Թագավորը ըսըց. - Լալա՛, էաս պետեննուն վրան էալ աշմիշ էղավ. էսի Աստված միզի հրեշտակ է ճանփեր, իշալլահ պիտի հաղթե, օր էաս էալ հաղթվավ բալլիստանը տի տանք:

Արևը ցաթեց, չպող խմելեն կամաց-կամաց կէրթա, գնըց մոտեցավ եորտյուին. քաշեց կեծակի թուրը. ... պատինքեն քաշելուն քիմի՝ անպն օ կը կեծկըլտա, պաշլայեց կեծկըլտիլը տալմիշ էղավ էորտյուին մեջ. ըս դըուն մտավ, ըն դըուն էլավ, ըն դըուն մտավ, ըս դըուն էլավ. ընոց սյսկրները խառնվան իրուր. պաշլայեցին մեկը մեկ ջարդիլը, չին գիտեր:

Թագավորը ըսըց լալային. - Ջարդելեն պարսպին մոտեցան:

Թագավորը շատ ուրախացավ. ըսըց. - Լալա՛, ըս ձին իմ ձին է:

- Ինդո՞ւր տի քու ձին ըն ծըկուն ընցնի:

- Վալլա, իմ ձին է, - ըսըց թագավորը:

Տղան ջարդածը ջարդեց, բռնածը նետեց զնդանը:

Թենպեի ըրեր էր աղջկան, օ հասնելուն քիմի՝ ծինը քաշե տեղը, օ թագավորը իմաց չըլլի:

Տղան հասավ դուռը, էջավ. աղջիկը ձինը անցոց ներս, տղան էալ մտավ ներս, աղջիկը ըսըց. - Առ ծոցուս չեվրեն, ձիուն փրփուրը սրբե:

Արբեց, չորցոց, էլան դուրս, մտան իրանց օդան, մերդե շերպեթ մի խմեցին:

Թագավորը, լալան կափանքը բացին, էջան ծիաննուն քով. ձիաննուն պիթունին էալ հայան, նե էարին կա, նե քրտինք:

- Ըս կարմիր ձին էր:

- Թագավոր ապրած, նշան չկա, - ըսըց լալան, էան ձին էարին քրտինքի մեջ էր մնացել:

Աղջիկը, տղուն գրկվան, պլվան. պարկան իրուր հետ զրուցեցին. - էրկու թագավոր յաղթվան, հալե, ուսուլե կըյրեն, մարդ չմնըց էնոց:

Ուրուշ էրկու թագավոր միացան, խաս-ասկերնին առին, ընկան էկան սայմանի գլոխը, խապար ճանփեցին ըս թագավորին. «Բալլիստանը կուտաս, տո՛ւր, եա՝ կռիվնիս կռիվ է»:

Թագավորը գրեց. «Մի մարդ էալ մնը, բալլիստանը չիմ իտար, ափուցնուդ գալածը մի թողնեք»:

Սայմանները ինչ օ ժողովուրդ կար ըս թագավորին, էկան լցվան քաղաքը:

Թագավորներ քառսուն եոթը դուռը բռնեցին. քաղքին չորս դին մասերե կապեցին, ուզեցին բալլիստանը:

- Չիմ իտար, - ըսըց:

- Պետեններդ կը փլիք, քաղաքդ կը վառիք:

Թագավորը մտածոց մեջ մնըց. լալան ըսըց. - Թագավո՛ր ապրած, կանչիք Աստուծո, ճանփե հրեշտակը կինե:

Տասվերկու տարի էր, օր նե՛ սուլթանը, նե՛ թագավորը, նե՛ էրկու աղջիկը* չըսին թե՝ ո՞ւր է գընցեր, ուսկա կուգա, տանը մարդերը քենով էին հետը, գիշերը կէրթըր մտիկ կիներ, հորն ու մորը էղածը կիմանար:

Տղան մտածեց. «Շատ վախթը կը հայիմ, օ քովս չէ թագավորի աղջիկ»: Հարցոց. - Թագավորի աղջի՛կ, ո՞ւր կէրթըս:

- Մեարս ու պապս շատ նեղութան մեջ ին. քառսունը եոթը դուռը կղպած, քաղքին չորս դին բռնած՝ բալլիստանը կուգին. չէ նե՝ «քաղաքը կը վառիք» կըսին:

Տղան հերսոտավ, էլավ, նստավ, առավոտուն էան լմանը խըռ ձին հանեց, հեծավ գնըց կռիվ: Ըս դըուն մտավ, ըն դըուն էլավ. ըն դըուն մտավ, ըս դըուն էլավ, էան լմանը օ մեռնողին էարինը սաղը կառնըր, կէրթըր:

Թագավորը կինե արևցըթուն էլավ թամաշա. - Լալա՛, ըդի իմ ձին է, - ըսըց:

- Ըն հեղուն էալ կըսեիր իմ ձին է:

Տղան էան լմանը ձին կապեց. գընցին տուն, էան լմանը աղջկան հետ պարկվան: Թագավորը էան լմանը էջավ տեսավ, օ ձին տեղն է:

Մնըց մի ժամանակ, մեկալ թագավորներ լսեցին, օ ըս էրկու թագավորներ էալ ավրա՛ծ է, էադ խամ թագավորները իրարու հետ զրուցեցին, ասկեր էրին, էկան կռիվ:

Մի թագավոր ըսըց. - Թֆանու ձորը էրթըք, օ յաղթիք:

Էկան հոն, կայնան. բալլիստանը ուզեցին:

Թագավորը ըսըց. - Չիմ իտար:

Քաղքին չորս դին բռնեցին, ճրագները վառեցին:

- Եա՛ բալլիստանը կուտաք, եա՛ քաղաքը կը վառիք:

Թագավորը տեսավ ճրագնին, գլխու խելքը գնըց, ինքզինք կորուս:

Աղջիկը տղին խապար տվեց. - Թագավորի տղա՛, էլիր պարկուկ տեղացդ, հայիր փենճերին:

---

* Պզտիկ աղջիկը դայպ էր էղեր (ծ.ա.):

Տղան հայավ, օ քաղքին չորս դին ճրագ կը վառի. էրկնուց աստղերուն հսապը կա, ճրագին հսապը չկա:

Տղին աչքը վախեցավ, պենկզը նետեց:

Աղջիկը ըսըց. - Ինչո՞ւ պենկզդ նետեցիր:

- Ես չնետեմ տե՛ վե՞վ տի նետե. պապուդ հինգ մարդ չկա օ ինձի օգնութին ինե. վեզիրնը, նազիրը մենծ-մենծ կը զրուցին՝ «կը զինիք», կնկտոցը քովուն չեն հեռանար. ջարդելեն թա թուլցեր է, մեջքս կոյրեր է, էդի դարըս է, թագավորի՛ աղջիկ:

Աղջկան ծնկվընին կոյրան. - Իմ ղուվաթը դու էիր, քիզի պես կըյրիճը օ վախեցավ՝ խոսքդ է, էդի դարերնիս է: Չիմ թողեր օ կռիվ էրթըս, կէլլըր մեկ-մեկ ձի կը հեծնիք, կէրթըք հորդ տունը:

- էադ էղա՞վ, - ըսըց տղան:

- Տասվերկու տարի է հետս քենով-խռով են. ինչո՞ւ չէղավ, շատ լավ էղավ, հացս ջուրս չին իտար:

- Էլիր ղայվե մի էփե, խմիմ, պատրաստ տեսնըք:

Տղան հեծավ քելեշ ձինը, էան լմանը մի զենկու զարկեց, պետեննուն վրուն ընցավ ընդին. քառսուն եոթը դռվընին կղպած էր: Ըն թագավորնուն զորապետնին* մի էրկու հատ կային, խամ էն փրդած առջի կռվուն. էադ էրկուքը խապար տվին իրանց թագաավորին. - էան ձիովը պետենի վրուն ընցավ, հիմա միզի կը վերցը:

Պոռին փչեցին. տղան տալմիշ էղավ եորտյուն, տասվերկու սահաթ չարփլմիշ էղավ. մի զենկու զարկած ատենը՝ տոխսան-տոխուզ մարդը կը մնըր ձիուն տակ:

Թագավորն, սուլթանը ու լալան էլան թամաշա, աղջիկն էալ ինկեր փենճերեն կուլա, թամաշա կինե: էրկու սահաթ տահա կար իրիկվա, կանչեց խալայեղին՝քաշե՛, արապ ձինը:

Աղջիկը լաթերը հանեց, տղին լաթերը հագավ, մազերը թափեց, գդակը զարկեց վրան, սև փուշին կապեց գլոխը, խարղին առավ ձեառքը, հեծավ ձինը, քառսունը եոթը դուռը օլըրվավ. պեքճիստանը վախուստանուն դուռ չբացին:

Տղան տասվերկու սահաթը լմնցոց. շատ մարդ եսիրներ բերըց, մնացածը սայմանեն հանեց, մեռած մարդուն էարինը ձիովը կառներ, կէրթըր սելի պես:

Տղին թևերը թուլցավ, աչքը էարինեն բռնվավ, ձիուն աչքը էարին լցվավ, չէր տեսնըր, լեաշերը տրորելեն կերթըր:

---

* Նախորդ պատերազմեն մնացած (ծ.ա.):

Տղան վերջցոց. մութը վրան ընկավ, դարձավ դեպի իրան օդան. հե մ'էլ տեսավ, օ արապ ձինը հեծեր է մեկ տղա, քաղքի միջու թարաֆը կօլրտի, դովընին չին բանար:

Տղան ծոցուն այլըխը հանեց. ծիուն աչքի արինը սրբեց. «Քելե՛շ ձին, քիզի տեսնըմ», - ըսըց, քշեց արապ ձիուն վրա, վրա տվեց: Աղջիկը կը փախեր, տղան առաջը կըյրեց, թուրը նետեց աղջկան, աղջիկը էջավ փորու տակ ձիուն, նետեց ձեառքը գլոխը, աղջկան փուշին մնըց ձեառքը, մազերը թափվավ փեճը:

- Ի՞նչ կինիս, թագավորի՛ տղա, ես եմ մնացել, ինձի՞ս էալ տի կըյրիս:

Տղան անքան ջարդեր էր, օր թուրը իրեք թիզ էր՝ էարինը չորցեր էր, մնացեր էր էրկու թիզ տեղ:

Թագավորի տղի թևերը թուլցան, թուրը ափուցը ընկավ: Թագավորի աղջիկը թուրը առավ, էարինը սրբեց, տվեց տղին. զարկեց պատենքին մեջ, էկան տունը, ձիանը լոքցուցին, քաշեցին տեղը:

Խալայեղը տղին լաթերը փոխեց, պղինձ մի ջուր ըրըց, տղան լոքցոց. մերդե շերպեթ խմեցին, չպողը քաշեց, յասլանմիշ էղավ:

- Թագավորի աղջիկ, էդի դարս էր, Աստված խնայեց, քելեշ ձինը խալըսեց ինձիս:

Մի ժամանակ ընցավ. թագավորները կինե զրուցեցին, խապար ճանփեցին ըս թագավորին. «Պատրաստ տես, մ'ըսեր պեպախտութին կինիք»:

Թագավորը պաշլայեց պատրաստ տեսնալը:

Ըն դըուն մեկ թագավորը քաշեց էկավ սայմանին գլոխը, պաշլայեցին կռիվ ինիլը:

Տղան հեծավ էան լմանը արապ ձին, գնըց կռիվը, պաշլայեցին իրուր ջարդիլը: Տղան էնոց թագավորը պոզմիշ ըրըց. բռնածը բռնեց, փախածը փախավ:

Խապար ճանփեցին ըն մենծ թագավորին՝ տեմուր-ղափուին տիրուն. - Ըս մեր թագավորները հաղթվան, մնացիր դու:

Էան թագավորը հերսոտավ. - Տեմուր ղափուն բացեք:

Բացին, պայրախտարն ընկավ առաջ, իրեք օր, իրեք գիշեր էնքան մարդ ընցան օ, սյունկյուն դռանը կը դպեր, դռան եշիկը մաշեցավ:

Էկան քաղքին չորս դին կըյրեցին. եոթը թագավորե շատ ասկեր ուներ, ասկերին մեկ ճոթը քաղաքը օլրեց, մեկը տահա ներսեն կանցներ: Ճոթը կըյրվելուն քիմի՝ թագավորը ըսըց. - Փլեցե՛ք պետենները, վառեցեք քաղաքը:

Ըս թագավորը հայավ օ, սահաթը իրիկվա տահա մեկն էր. լալային հետ տեսան օ՝ քաղքին չորս դին կըյրած ին, պետենները կը ծակեն: Քառսունը եոթը դուռ էր, էրկթե դռվընուն պաշլայեցին թափանով զինիլը. շատ մեոհքեմ պետեններ էին, չէին կրնըր ծակեր, թափանով կը զինեին քաղաքը, էրկինք-գետինք դող կելլըր. տղացկանը փախելու տեղ կը փնտռեր, ճար չկար: Քաղքին մարդը կուլային, կաղաղակեին: Թագավորն ու լալան քան ըզժողովուրդն շատ կուլային:

Ըսըց թագավորը. - Կանչեցե՛ք էրկնուց, գետնուց ստեղծող Աստուծուն, հրեշտակները ճանփե միզի օգնական:

Գաք թագավորի աղջկան:

Տղան շատ խորունկ քուն էր. թափանները էրկթե դուռը զարկած ժամանակ թագավորի աղջիկը կուլար. «Վառեցին-վառեցին, քաղաքը ջարդեցին-ջարդեցին, միզի եսիր տարին-տարին» կը պոռար:

Տղան արթըցավ. - Թագավորի՛ աղջիկ, էսօր էրածիս շատ էարինեղուքան մեջ էի, էարինե կարմիր ծովուն մեջ էի, էանքան լողացի, էանքան լողացի՝ մի մարդ մզրախը ձեառքը էրկնցոց, բըռնեցի-էլա:

Աղջիկը տեսավ օ տղին էրեսին գոն չկա, աղջկան էալ չկար զաթի, բացեց սնտուկը, հանեց մումիա, լցեց ջրին մեջ. կեսը ինքը խմեց, կեսը տղին խմցոց*:

Տղին սիրտը քարացավ. աղջիկն դադարավ. քաշեցին խըռ ծին, էան լմանը սահաթը էրկուքին հասավ:

Տեսավ էաս թագավորը՝ մի տղա հեծավ ծինը, մզրախը փեճը, մզրախին թոփը սև կըլլիր, էսորը կարմիր էր, օսկու պես կը փիլար:

Վեզիրն ու լալան տեսան, օ տղան քշեց, գնըց. պետենի քով հասնելուն քիմին՝ զարկավ, զենկուն անցավ ծին, պատեցավ ընդին. թուրը քաշեց, մզրախը առավ ճըռվնընն օրթալախը. իմաց չէղան էան թագավորի մարդիկը, թե էաս ինչ ծիով է: Քշեց ընցավ թա ետքը, իրեք հեղ տարավ ծինը բերեց՝ զարկեց զենկվստանը:

- Ալա, կելտիմ սիզե**, - ըսըց, տալմիշ էղավ տղան:

Մի անա-պապա-կյունի էղավ, օ էրկինք գետինք կը դողա:

Տղան գոռաց. - Պիր իկիթ քի եախասնտան թուքուլուր, իլան տիշլի, տալ խանչել՝ չաթալ մզրախ կյունի տուր***:

---

* Մումիան մարդու էարինե շինած է, վախի համար կը խմեն (ծ.ա.):

** Ա՛ռ որ, եկա ձեզ (ծ.ա.):

*** Այն քաջն, որ օձիքեն կը բռնվի, օձի ատամի - մերկ դաշույնի, երկճյուղ տեգի օրը կը բացվի(ծ.ա.):

Տղան ըս դըուն մտավ, ըն դըուն էլավ, զարկեց-զարկեց, սահաթը էրկուքին պաշլայեցին, շատ վախթ իրուր ջարդեցին. խառնվան իրուր՝ օ Աստված հեռուն ինե, սահաթը վեցին տահա կռիվ կինեին. տղին թևը թուլցավ, հոգին ծայրըցավ, ոռը ձիուն վրա քերթվավ:

Թագավորը, լալան տեսան օ մի ծիով թուրը քաշեր, սալլաթմիշ կինե, կօլրտի. նետեցին, զարկեցին տղին սաղ թևին. օխին շիշը մտավ մեջը մնըց. չընցավ ընդին. թուրը առավ չոլախ ձեառքը, վեր մի դիե էկավ, դարձավ էն եանը, քշեց ընդին, խառնեց առջին, զարկածը զարկեց, սահմանեն դուրս հանեց:

Կռիվը մայնա էղավ (վերջացավ). թագավորը ըսըց. - Ես շատ զարմանք կը մնամ. էաս մեր տան միջուն է, լալա՛, կանուխ գիշերը աղջինեռուս օդան կօլրտիս, տեսնըք, ի՞նչ բան է:

Գնըց մենծ աղջկան օդան, օլրտավ, չկրցավ գտեր, էկավ օրթանճա աղջկան, հոն էալ չկրցավ գտեր. պզտիկ աղջկան գնըց՝ օ խալայեղը դուռը կը պեյե, կայնավ թագավորի առաջ:

- Դուռը բա՛ց, - ըսըց թագավորը:

- Թագավորը ապրած, իրավունք չունիմ բանալու:

Թագավորը մտոքը անցոց. «Վալլահ, հոսի բան մի կա»:

- Բա՛ց, որդի՛, տասվէրկու տարի է՝ աղջիկս չիմ տեսեր:

Իրիկվընուց քերփեթիով օխին շիշը քաշած՝ հանած էին. տղան շատ դժար հիվանդ էր, իրեք օր, իրեք գիշեր չէր քնանար, նե՛ տղան, նե՛ աղջիկը:

Թագավորը ներս մտավ, հայավ օ աղջիկը ու տղա մի պարկեր են իրուր քով. տղին թևը հայավ՝ օ բաց էր, իրան այլըխն էալ կապմուն էր վրան. գլխու քոլոզն էալ ընկեր էր գետին. թագավորը առավ, դրավ ծոցը, խալայեղին ըսըց. - Աթոռ մի առ, էկո:

Թագավորը նստավ:

- Ձեան չհանիս, - ըսըց խալայեղին:

Տղին թևը շատ զարպով կը ցավեր, ցավին զոռուն էլավ նստավ, տեսավ օ թագավորը գլխուն վերդին է. թուրը դեննն էր, առավ ձեառքը. պաշլայեց քոլոզը փնտռիլը:

- Որդի՛, փնտռածդ սա է, իմ քովն է, մի՛ վախիր:

- Թագավո՛ր ապրած, ի՞նչ տի վախիմ:

- Որդի՛, մուրազդ ուզե, ինձիս նեղուբան դու ես խալըսեր:

- Մուրազս քու սաղութինդ:

- Թագավորութինս քիզի տի հաստատիմ:

Թագավորութիւնը հաստատեց տղին վրա:

Եոթն օր, եոթ գիշեր հեարսնիք ըրըց, շատ մենծ ուրախութիւն էրին. տղան պսակեց:

Մի տարի ժամանակ մնըց տղան, ավուր մեկը շատ քեռնկյուր ընկավ տղան:

- Որդի՛, ինչո՞ւ էրեսդ չխնդար, - հարցոց թագավորը:

- Թագավո՛ր ապրած, ըս տարի եոթ տարի է էլեր իմ տնեն. եոթը տարվա ճանփա իմ էկեր. մեարս ու պապս միտքս է ընկեր, կարոտցեր իմ, ի՞նչ տի ինիմ, չիմ գիտեր:

- Խըռ ծինը թող սաղ մնա, եոթ տարվանը՝ տասվէրկու սահաթվան կէրթա, էդո՞ր էալ դասաֆեթը կինիս, ա՛յ որդի. քիզի ճանփու կը դնիմ հիմա. աղջիկս կը հեծնա անպուն ծին, դու կը հեծնաս խըռ ծինը, վեց ամիս ժամանակ կը կենաս, կարոտութինդ կառնիս՝ կուգաս:

Թագավորը ճանփա դրեց. էլան գըցին, հասան իրան պապուն տեղը: Մի ամիս ժամանակ կեցան, պապը տղին մինե կարոտութինը առավ, վախճանավ թագավորը, մենծ տղան նստավ տեղը:

Պզտիկ տղան էալ ըսըց մենծ աղբորը. - Դու հոսի թագավորութին էրե, ես էալ հոնի կէրթըմ:

Առավ աղջիկը գնըց. էան թագավորի էրկիրը նստավ, թագավոր էղավ:

Հասան իրանց մուրազին էսոք, դուք էալ՝ ծերը: